Քաղաքականության փաստաթուղթ կանանց հակաբեղմնավորիչ մեթոդների վերաբերյալ

ԿՈՒԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA

Քաղաքականության փաստաթղթի կանոնից հակաբեղմնավորիչ մեթոդների վերաբերյալ

Փաստաթղթի նպատակը

Սույն քաղաքականության փաստաթղթի նպատակն է հակաբեղմնավորիչ մեթոդների հասանելիության իրավունքի վերաբերյալ ներկայացնել միջազգային իրավական կարգավորումները, չափորոշիչները և փորձը:

Սույն փաստաթուղթը նախատեսված է պետական գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար, որոնք իրականացնում են այս ոլորտում ադվոկացիոն գործունեություն, այդ թվում՝ օրենսդրական նախաձեռնություններ: Փաստաթղթի հիմքում դրված է իրավունքահեն և փաստերի վրա հիմնված մոտեցումը:

Որոնք են հակաբեղմնավորիչ միջոցները.

Հակաբեղմնավորիչները հղիությունից պաշտպանվելու միջոցներ են:

Ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցներից Հայաստանում տարածված են տղամարդու պահպանակները, ներարգանդային պարույրը (սպիրալը), հորմոնային դեղահաբերը, ներարկվող հակաբեղմնավորիչները և սերմնասպան միջոցները: Հայաստանում կան ժամանակակից հակաբեղմնավորիչների նաև այլ տեսակներ, սակայն վերոթվարկվածներն առավել տարածվածն են: Առկա են նաև ՇՏԱՊ բեղմնականխման հաբեր այն կանանց համար, ովքեր որևէ պատճառով անապահով սեռական հարաբերություն են ունեցել և չեն ուզում հղիանալ: Գոյություն ունեն հակաբեղմնավորման մշտական կամ անդառնալի մեթոդներ, որոնց միջոցով կանայք և տղամարդիկ այլևս չեն կարող լինել պտղաբեր:

1977 թվականից Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հրապարակում է առաջնային դեղամիջոցների ցանկ: Այդ դեղամիջոցների նպատակն է բավարարել բնակչության առողջապահական կարիքների առաջնահերթությունը և

պետք է հասանելի լինեն «...բոլոր ժամանակներում, բավարար չափով և մատչելի գումարով...»:

Ժամանակակից հակաբեղմնավորիչները, ներառյալ՝ հորմոնային դեղահաբերը, ներարկվող հակաբեղմնավորիչները, ներարգանդային պարույրը, պատնեշային միջոցները և շտապ բեղմնականխման հաբերը ներառված են այդ ցանկում:

Մարդու իրավունքների շրջանակը

Մարդու իրավունքների միջազգային շրջանակի համաձայն՝ պետությունները պարտավոր են կանանց տրամադրել հակաբեղմնավորիչ միջոցների լայն շրջանակի հասանելիություն: «Հակաբեղմնավորիչների լայն շրջանակը» ենթադրում է հասանելիություն կանանց կողմից վերահսկվող հակաբեղմնավորիչներին: Օրինակ՝ տարբեր երկրներում, պահպանակները համարվում են բնակչությանը տրամադրվող հակաբեղմնավորիչների առավել տարածված ձևը, քանի որ համարվում են էժան և արդյունավետ ծնելիության վերահսկման միջոց, ինչպես նաև օգնում են զույգերին պաշտպանվել սեռական ճանապարհով փոխանցվող վարակներից, սակայն կանայք միշտ չէ, որ կարողանում են պայմանավորվել իրենց զուգընկերների հետ դրանց կիրառման վերաբերյալ: Հետևաբար, կանանց կողմից վերահսկվող հակաբեղմնավորիչների հասանելիությունը շատ կարևոր երաշխիք է: Օրինակ, գոյություն ունեն կանանց համար նախատեսված պահպանակներ, բայց դրանք հասանելի չեն բոլոր երկրներում, և հետևաբար կանայք չեն կարող այս առումով ամբողջովին վերահսկողություն ունենալ իրենց մարմնի նկատմամբ, քանի որ չեն կարող կիրառել հակաբեղմնավորման որոշ միջոցներ:

Պետության այս պարտավորությունն արմատացած է կնոջ կողմից երեխաների թվաքանակի ու ժամանակաշրջանը որոշելու իրավունքի, առողջության իրավունքի, իրավահավասարության իրավունքի և գաղտնիության իրավունքի վրա:

Մատչելի, ընդունելի և լավ որակի հասանելիությունը հակաբեղմնավորիչ միջոցներին և ծառայություններին՝ զերծ հարկադրանքից, խտրականությունից և բռնությունից, շատ կարևոր երաշխիք է գենդերային հավասարության և կանանց մասնակցության ապահովման տեսանկյունից[1]: Հղիությունը պլանավորելու հնարավորությունը բարձրացնում է կանանց կարգավիճակը և ամրապնդում կանանց կողմից սեփական մարմնի վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավունքը, ինչը հանգեցնում է կանանց կողմից կրթության և աշխատանքի հասանելիության բարձրացմանը: Այն նաև թույլ է տալիս կանանց ապահովել համապատասխան խնամք, սնունդ, բնակարան և կրթություն իրենց երեխաների համար: Ընդունելով այսքանը՝ միջազգային մարմինները բազմիցս կոչ են անում պետություններին ապահովել կանանց հակաբեղմնավորիչների հասանելիությամբ[2]: ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն, օրինակ, նշում է, որ առողջության իրավունքը ներառում է սեռական և վերարտադրողական առողջության իրավունքը, որը պարտավորեցնում է պետություններին ապահովել հակաբեղմնավորիչների և հակաբեղմնավորիչների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը[3]: ՄԱԿ-ի

1. Տես՝ https://www.unfpa.org/resources/rights-contraceptive-information-and-services-women-and-adolescents
2. Տես՝ https://www.reproductiverights.org/sites/crr.civicactions.net/files/documents/crr_eu_contraception_factsheet_v2.pdf
3. Տես՝ http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=4slQ6QSmlBEDzFEovLCuW1a0Szab0oXTdImnsJZZVQfQejF41Tob4CvljeT

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն՝ հայտնել է իր մտահոգությունը, նշելով, որ հակաբեղմնավորիչների հասանելիության բացակայությունը հանգեցնում է կանանց կողմից բժշկական ընթացակարգերի անապահով օգտագործմանը, ինչպես օրինակ՝ ոչ բարենպաստ պայմաններում իրականացված աբորտները: Հաշվի առնելով դրանց ազդեցությունը կանանց կյանքի ու առողջության վրա, Կոմիտեն, խրախուսում է պետություններին մեծացնել հակաբեղմնավորիչների հասանելիությունը ապահովագրական ծածկույթի միջոցով և այդպիսի հասանելիությունը համարում է առողջության իրավունքի մաս[4]: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն նույնպես մտահոգված է, որ հակաբեղմնավորիչների հասանելիության բացակայությունը վտանգի տակ է դնում կանանց կյանքը և, վկայակոչելով գաղտնիության իրավունքը և խտրականության բացառումը, նշում է, որ կանայք պետք է ունենան հասանելիություն հակաբեղմնավորիչներին: Վերջին տարիներին, ՄԱԿ-ի տարբեր պայմանագրային մարմիններն, այդ թվում՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն, ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն, ուղղել են առաջարկներ Հայաստանին՝ պետության կողմից կանանց տարբեր խմբերի՝ այդ թվում՝ գյուղաբնակ կանանց շրջանում, հակաբեղմնավորիչների հասանելիությունը, մատչելիությունը և որակը ապահովելու վերաբերյալ[5]:

iAP6sGFQktiae1vlbbOAekmaOwDOWsUe7N8TLm%2BP3HJPzxjHySkUoHMavD%2Fpyfcp3Ylzg

4. Տես՝ https://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/recomm.htm

5. Տես՝ https://tbinternet.ohchr.org/Treaties/CCPR/Shared%20Documents/ARM/CCPR_C_ARM_CO_3_47163_E.pdf
https://www.ohchr.org/en/hr-bodies/upr/am-index

Հակաբեղմնավորիչների հասանելիության և մատչելիության խոչընդոտները

Չնայած մարդու իրավունքների միջազգային նորմերը հստակ նշում են հակաբեղմնավորիչների հասանելիության կարևորության մասին, կանայք շարունակում են բախվել հասանելիության և մատչելիության բազմաթիվ խոչընդոտների՝ հակաբեղմնավորիչ միջոցներ ձեռք բերելու և օգտագործելու ճանապարհին: Հիմնական խոչընդոտներից մեկը նրանց համեմատաբար բարձր արժեքն է: Հատկապես այն երկրներում, որտեղ հակաբեղմնավորիչները ներառված չեն հանրային ապահովագրության ծածկույթում, դրանք անհասանելի են մնում շատ կանանց համար: Գյուղաբնակ կանանց համար, լուրջ մարտահրավեր է նաև դեղատների և հիվանդանոցների բացակայությունը գյուղաբնակ համայնքներում, որտեղից նրանք կարող են ձեռք բերել կամ ստանալ (այդ թվում՝ տեղադրել կամ ներարկել) ժամանակակից հակաբեղմնավորիչները: Փոքր համայնքներում լուրջ խոչընդոտ է նաև գաղտնիության պահպանման իրավունքի երաշխավորումը բժիշկների կամ դեղատան աշխատակիցների կողմից. կանայք կաշկանդված են զգում քննարկել հակաբեղմնավորիչների կիրառման հնարավորությունները բժիշկների ու դեղագետների հետ՝ մի կողմից առկա կարծրատիպերի և ամոթի պատճառով, մյուս կողմից՝ գաղտնիության խախտման:

Լուրջ խոչընդոտ է նաև հակաբեղմնավորիչների վերաբերյալ հիմնավոր տեղեկատվության բացակայությունը: Ժամանակակից հակաբեղմնավորիչների օգտագործման վերաբերյալ հիմնավորված տեղեկատվության բացակայության և խարանի արդյունքում շատ կանանց մոտ կարող է լինել սխալ և թերի տեղեկատվություն հակաբեղմնավորիչ միջոցների վերաբերյալ, ինչի արդյունքում վերջիններս հրաժարվեն կիրառել այդ միջոցը և ունենան անցանկալի հղիություն ու վտանգի տակ դնեն իրենց առողջությունն ու բարեկեցությունը: Հակաբեղմնավորիչների վերաբերյալ կարծրատիպային մտածելակերպը, առկա խարանը դրանց կիրառման հետ կապված լուրջ մարտահրավեր է կանանց շրջանում

Համապարփակ և իրավունքահեն սեռական կրթության բացակայությունը շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, նպաստում է կանանց շրջանում հակաբեղմնավորիչ միջոցների արդյունավետ կիրառման վերաբերյալ տեղեկացվածության ցածր մակարդակին:

Մյուս խոչընդոտը հանդիսանում է բռնությունը կանանց նկատմամբ: Բռնի հարաբերությունների մեջ գտնվող կանայք, կարող են չվերահսկել իրենց պտղաբերությունը, ինչն էլ հանգեցնի անցանկալի հղիության, որն էլ իր հերթին կարող է մեծացնել կնոջ կախվածությունը բռնարարից:

Հակաբեղմնավորիչ միջոցները և տեղեկատվությունը պետք է լինի հասանելի, մատչելի, ընդունելի և որակյալ կանանց տարբեր խմբերի համար, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, ՄԻԱՎ-ով ապրող, գյուղաբնակ կա-

նանց համար և այլ խմբի կանանց համար:

Պետությունները պետք է ապահովեն հակաբեղմնավորիչ միջոցների լայն շրջանակի **հասանելիություն**, քանի որ ոչ բոլոր հակաբեղմնավորիչ մեթոդներն են ընդունելի կամ արդյունավետ կանանց բոլոր խմբերի համար:

Պետությունները պարտավոր են նաև վստահ լինել, որ բժշկական հաստատությունները համալրված են հակաբեղմնավորիչների ամբողջ տեսականիով, դրանք բավարար քանակի են, ինչպես նաև հասանելի են հեռավար մարզերում ապրող կանանց համար[6]:

Պետությունները պարտավոր են ապահովել հակաբեղմնավորիչ միջոցների վերաբերյալ տեղեկատվության և ծառայությունների **մատչելիությունը** կանանց տարբեր խմբերի համար: Այս դրույթը վերաբերում է ոչ խտրական մոտեցմանը կանանց տարբեր խմբերին հակաբեղմնավորիչների ապահովման գործընթացում, դրանց արժեքին, ինչպես նաև իրավական (զուգընկերոջ համաձայնություն, ծնողի թույլտվություն) սահմանափակումների բացակայությանը:

Հակաբեղմնավորիչները պետք է լինեն **ընդունելի** կանանց տարբեր խմբերի համար, ինչպես նաև հաշվի առնեն կանանց տարբեր տարիքային խմբերի կարիքները:

Եվ վերջապես, պետությունները պետք է երաշխավորեն հակաբեղմնավորիչների որակը, մասնավորապես դրանք պետք է լինեն գիտականորեն փորձարկված, ժամկետի մեջ կիրառելի, ինչպես նաև համապատասխանեն տվյալ կնոջ առողջապահական և սոցիալական կարիքներին:

Որոշ եվրոպական երկրների ուսումնասիրությունը (Գերմանիա, Ռումինիա, Իսպանիա, Ֆրանսիա) վկայում է, որ հակաբեղմնավորիչ միջոցները հիմնականում տրամադրվում են կանանց անվճար կամ կանանց կողմից հավելավճարով, որը ծածկվում է երկրների համապարփակ առողջապահական ապահովագրությունների միջոցով: Այդ երկրներում ընտանիքի պլանավորման մեթոդների մասին տեղեկատվությունը հասանելի է դեռահասներին, ովքեր սովորում են հակաբեղմնավորիչների վերաբերյալ: Այս երկրները տրամադրում են նաև պետական բյուջեից միջոցներ, որպեսզի առավել հասցեական դարձնեն հակաբեղմնավորիչ միջոցների հասանելիությունը և մատչելիությունը կանանց տարբեր խմբերի համար: Պետությունների կողմից հակաբեղմնավորիչների հասանելիության, մատչելիության, ընդունելիության և որակի ցանկացած սահմանափակում նպաստում է կանանց կողմից անցանկալի հղիությունների թվի աճին, որի հասանելիությունն առանձին մտահոգության թեմա է կանանց իրավունքներով զբաղվող կառույցների համար:

Այսպիսով, ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցների հասանելիությունը, մատչելիությունը, ընդունելի և որակյալ լինելը կարևոր երաշխիք է պետության կողմից կանանց տարբեր խմբերի վերարտադրողական առողջության և իրավունքի պաշտպանվածության տեսանկյունից:

6. Տես՝ https://www.unfpa.org/resources/rights-contraceptive-information-and-services-women-and-adolescents

ԿՈԿ ՀԱՅԱՍՏԱՆ
WRC ARMENIA